# ԱԿԱՆՋԴ ԲԵՐ՝ ԱՍԵՄ...

**ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ**
**(1914–1993)**

## ԱՄՊՐՈՊԻՑ ՀԵՏՈ

Ամպրոպից հետո
Երկինքն ավելի կապույտ է լինում,
Խոտերն ավելի կանաչ են լինում
Ամպրոպից հետո:
Ամպրոպից հետո
Ճերմակ շուշանը ավելի ճերմակ,
Կակաչն ավելի կարմիր է լինում,
Եվ մեղրաճաղիկը՝ ավելի դեղին:
Ամպրոպից հետո
Սարերն ավելի բարձր են երևում,
Խոր են երևում ձորերն ավելի,
Եվ տափաստանները՝ ավելի արձակ:
Ծառերն ավելի խոնարհ են լինում
Ամպրոպից հետո,
Եվ հավքերը մեր գլխավերևում
Իրար կանչում են ավելի սրտով:
Ամպրոպից հետո
Բարի է լինում արևն ավելի,
Եվ մենք ավելի սիրով ենք իրար
Բարի լույս ասում:
Ամպրոպից հետո աշխարհը և դու
Հասկանալի եք լինում ավելի...

## Բառային աշխատանք

1. Ո՞ր բառերն ու բառակապակցություններն են կրկնվում: Ի՞նչ նպատակով է հեղինակը դիմում կրկնությանը:
2. Տեքստից դուրս գրիր գույն նշանակող բառերը և դրանցով նախադասություններ կազմիր:
3. Դուրս գրիր բառերը՝ ըստ աղյուսակի սյունակների:

| Գույներ | Ծաղիկներ | Թռչուններ | Բնության երևույթներ |
|---|---|---|---|
| | | | |

4. Շուշան-շուշան, Խոնարհ-խոնարհ բառազույգերով նախադասություններ կազմիր: Նշիր՝ ուղիղ, թե փոխաբերական իմաստով են գործածվել բանաստեղծության մեջ:
5. Կազմիր *ծաղիկ* բաղադրիչով բառեր:
6. Բառարանի օգնությամբ բացատրիր *հավք*, *խոնարհ*, *փափաստան* բառերի իմաստը:

## Տեքստային աշխատանք

1. Ի՞նչ թեմայով է գրված բանաստեղծությունը: Մեկնաբանիր:
2. Արձակ շարադրանքով վերարտադրիր բանաստեղծությունը:
3. Թվարկիր այն բոլոր «հերոսներին», որոնք մասնակցում են բանաստեղծական պատկերի ստեղծմանը:
4. Պատմիր ամպրոպի մասին՝ ըստ բանաստեղծական պատկերի:
5. Յուրաքանչյուր չորս տողի համար համապատասխան վերնագիր մտածիր:
6. Բանաստեղծության միջից դուրս գրիր «հերոսներին» իրենց բնութագրող բառերի հետ, օրինակ՝ կապույտ երկինք, ձերմակ շուշան, և ստեղծիր հերոսների պատկերասրահ:
7. Ո՞ր տողերում է խտացված հեղինակի հիմնական ասելիքը՝

ստեղծագործության հիմնական գաղափարը:

**8.** Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր քեզ դուր եկած պատկերը և ներկայացրո՛ւ քո դիրքորոշումը:

**9.** Ո՞րն է այս բանաստեղծության փոխաբերական իմաստը: Հիմնավորի՛ր:

**10.** Նկարի՛ր բանաստեղծության քեզ դուր եկած հատվածը:

**11.** Ընտրի՛ր երաժշտություն, որը համապատասխանում է բանաստեղծության բովանդակությանը: Հիմնավորի՛ր ընտրությունդ: